



«ՄԻԱՎ-Ի ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

փաստագրական վերլուծություն

Վաղինակ Տեր-Հովհաննիսյան

Երևան 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՄԻԱՎ/ՁԻԱՅ-Ի ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	3
2. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ	5
2. 1. ՕՐԵՆՆԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՔԱՂՅԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	6
3. ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ	9

1. ՄԻԱՎ/ՁԻԱՐ-Ի ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հատկանշական է նախևառաջ արձանագրել ներկա դրությամբ ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում. Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակվածության դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի համաճարակի տարեգրությունը ներկայանում է հետևյալ կերպ՝

- 1988 - ՄԻԱՎ վարակի առաջին գրանցված դեպքը. վարակման ուղին՝ հետերոսեքսուալ ճանապարհ
- 1988 - ՁԻԱՐ-ի առաջին գրանցված դեպքը
- 1989 - մահվան առաջին գրանցված դեպքը ՁԻԱՐ-ից
- 1990 - թմրամիջոցների ներարկային օգտագործման ճանապարհով վարակման առաջին գրանցված դեպքը
- 1996 - կանանց շրջանում ՄԻԱՎ վարակի առաջին գրանցված դեպքը
- 2000 - հոմոսեքսուալ ճանապարհով վարակման առաջին գրանցված դեպքը
- 2001 - երեխաների շրջանում ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՐ-ի առաջին գրանցված դեպքերը
- 2001 - ՁԻԱՐ-ից երեխայի մահվան առաջին գրանցված դեպքը
- 2002 - թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը մոտ 15%
- 2007 - թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը մոտ 6,8%
- 2010 - թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը մոտ 10,7%
- 2012 - թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը մոտ 6,3%
- 2014 - թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը մոտ 4%:
- 2016 - թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը մոտ 0,5%

1988թ. մինչև 2018թ հունիսի 30-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 3125 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնցից 217-ը` 2018թ. ընթացքում:

ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի ընդհանուր կառուցվածքում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները` 2163 մարդ (69%), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 962 դեպք (31%): ՄԻԱՎ վարակի 54 դեպք (1,7%) է արձանագրվել երեխաների մոտ:

ՄԻԱՎ-ով վարակվածների 51%-ը ախտորոշման պահին եղել է 25-39 տարիքային խմբում:

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը (69%) և թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (21,5%): Սրանցից բացի, արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով, մորից երեխային և արյան միջոցով ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր:

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումն ըստ փոխանցման ուղիների.

Հետերոսեքսուալ փոխանցման ուղի	69,0%
Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով	21,5%
Հոմոսեքսուալ փոխանցման ուղի	3,5%
Մորից երեխային	1,5%
Արյան միջոցով	0,1%
Անհայտ	4,4%

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 1579-ի մոտ (կին` 404, երեխա` 30) ախտորոշվել է ՁԻԱՀ: Համաճարակի սկզբից գրանցվել է ՄԻԱՎ վարակով պացիենտների մահվան 738 դեպք: Մահացածների թվում կան 137 կին և 10 երեխա:

Թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով գրեթե բոլոր վարակվածները եղել են տղամարդիկ (99%), իսկ գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (97%):

ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է Երևանի բնակիչների շրջանում` 961 դեպք, որը կազմում է բոլոր գրանցված դեպքերի 31%-ը: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի թվով երկրորդ տեղում ծիրակի մարզն է` 11,3%: ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի հաշվարկը 100 000 բնակչի հաշվով ցույց է տալիս, որ ամենաբարձր ցուցանիշը ծիրակում է` 144,7 որին հաջորդում են Լոռու, Գեղարքունիքի և Արարատի մարզերը համապատասխանաբար 140,9; 106,1; 98,1:

ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 3400, որոնցից 2017թ. վերջի դրությամբ միայն 67%-ը գիտեր իր կարգավիճակի մասին: Իրենց կարգավիճակի մասին իմացող մարդկանցից ՅՌՎ բուժում ստանում էր 67%-ը, որոնցից չհայտնաբերվող վիրուսային ծանրաբեռնվածությունն ունեցել է 85%-ը:

ՄԻԱՎ-ի տարածվածությունը 15-49 տարիքային խմբում 0,2% է¹:

2. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսվում է քրեական պատասխանատվության ենթարկել մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու համար: Այդ հանցագործությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածով².

Հոդված 123. Մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը

1. Այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելն այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անչափահասի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:

Անուղղակիորեն, սակայն վերջինիս հետ կապ ունի ՀՀ քրեական օրենսգրքի 124-րդ հոդվածով նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվությունը.

Հոդված 124. Վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը

¹ Տե՛ս. http://www.arm aids.am/statistics/stat_2018/july_stat_2018.html

² Տե՛ս. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=123018>

1. Այլ անձին վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելի այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) անչափահասի նկատմամբ,
- 3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Բացի այդ ՄԻԱՎ-ի հետ կապված հարաբերությունները իրավակարգավորվում են նաև հետևյալ օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, ազգային ծրագրերով, և այլն.

- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք /ընդունված՝ 04 մարտի 1996 թվականին/,
- «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենք /ընդունված՝ 03 փետրվարի, 1997 թվականին/,
- ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի սեպտեմբեր 18-ի թիվ 2187-Ա հրաման «ՄԻԱՎ -ի տարածումը բացառող նախազգուշական միջոցառումների ՑԱՆԿ»-ի մասին
- «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագիր 2017-2021թթ. /ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք՝ 15 հունիսի 2017 թվական, թիվ 15/ և այլն:

2.1 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ առողջապահության նախարարության հեղինակությամբ 15. 02. 2018թ. -ից մինչ 05. 03. 2018թ. -ը քննարկման է դրված եղել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, համաձայն որի՝ առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածում կատարել փոփոխություններ՝ հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 123. Մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակելը

1. Այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելի այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

- 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) անչափահասի նկատմամբ,
- 3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մյուս՝ ՄԻԱՎ-ով վարակված կամ վարակման վտանգի ենթարկված անձը ժամանակին նախազգուշացված է եղել առաջինի մոտ այդ հիվանդության առկայության մասին և կամավոր համաձայնվել է կատարել վարակման վտանգ ստեղծած գործողություն, կամ եթե հանցանք կատարած անձը ձեռնարկել է վարակը չփոխանցելու համար անհրաժեշտ բոլոր կանխարգելիչ միջոցառումները:»³:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հետևողական են եղել այդ օրենսդրական նախաձեռնություններին, հետևելով դրանց հետագա զարգացումներին՝ շարունակ հանդես են եկել առաջարկություններով՝ առաջնորդվելով միջազգային իրավաստեղծ գործունեությամբ և իրավակիրառ պրակտիկայով հիմնավորված առաջադեմ մոտեցումներով, այլ պետությունների և միջազգային հեղինակավոր կազմակերպությունների փորձով, հորդորել են ընդունել դրանք և կոչ են արել պետությանը, որպես միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված պարտավորությունների ստանձնող, շուտափույթ կատարել դրանք:

Թեև վերոնշյալ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, ինչպես և Հայաստանի իշխանություններն են հիմնավորում դրանով, պայմանավորված է եղել ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածը ՄԱԿ-ի ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային սկզբունքներին համապատասխանեցնելու, և Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից Հայաստանին տրամադրված մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացումը փաստող հավաստագրին կից առաջարկությունների կատարման անհրաժեշտությամբ, որի արդյունքում Հայաստանը կշարունակի պահպանել նշված հավաստագիրը, սակայն մինչ օրս օրենքի այդ նախագիծը գտնվում է քննարկման փուլում և, ըստ Կազմակերպության հարցմանը տրամադրված պաշտոնական պատասխանի, լրամշակվելուց հետո այն կրկին կշրջանառվի և կտեղադրվի իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում⁴:

Օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը ՀՀ առողջապահության նախարարությունը հիմնավորել է՝ ներկայացնելով ընթացիկ իրավիճակն և խնդիրները: Համաձայն որի՝ ՄԱԿ-ի ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միացյալ ծրագիրն առաջարկում է երկրներին վերանայել իրենց քրեական օրենսդրությունը՝ սահմանափակելով ՄԻԱՎ-ի փոխանցման համար պատասխանատվությունը միայն այն դեպքերում, երբ անձը տեղեկացված է իր ՄԻԱՎ հիվանդության մասին, գործում է կանխամտածված և դիտավորությամբ, որի արդյունքում այդ վարակը փոխանցում է այլ անձանց:

ՄԱԿ-ի ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միացյալ ծրագիրը կոչ է անում չկիրառել քրեական պատասխանատվություն հետևյալ դեպքերի համար.

- երբ անձը տեղեկացված չէ իր հիվանդության մասին,
- երբ անձը չի հասկանում, թեինչ ուղիներով է փոխանցվում ՄԻԱՎ-ը,
- բացահայտել է իր ՄԻԱՎ կարգավիճակը տվյալ անձին,
- չի բացահայտել իր կարգավիճակը, քանի որ վախեցել է բռնությունից կամ այլ ծանր բացասական հետևանքներից,
- ձեռնարկել է որոշակի միջոցներ, որպեսզի նվազեցնի վարակի փոխանցման վտանգը (օրինակ՝ սեռական հարաբերություններ պահպանակի օգտագործումով),

³ Տե՛ս. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը. <https://www.e-draft.am/ru/projects/743>

⁴ Ներկայացված է՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից 27. 07. 2018թ. -ին տրված թիվ ՀՀ/11. 1/10306-18 պատասխանի:

- Երբ կողմերի միջև եղել է նախնական համաձայնություն՝ ընդունելով հնարավոր վտանգը⁵:

ՄԱԿ-ի ՁԻԱՅ-ի դեմ պայքարի միացյալ ծրագիրը պետություններին առաջարկում է նաև խուսափել ՄԻԱՎ վարակի հետ կապված հատուկ հոդվածներ սահմանելուց, իսկ կանխամտածված վարակման դեպքում կիրառել ընդհանուր քրեական հոդվածները:

Այն դեպքում, երբ բռնությամբ ուղեկցված իրավախախտումը հանգեցնում է ՄԻԱՎ վարակի փոխանցման կամ ստեղծում է փոխանցման մեծ վտանգ, ՄԻԱՎ-ի նկատմամբ կարգավիճակը կարող է համարվել ծանրացուցիչ հանգամանք, եթե տվյալ անձն իրավախախտում կատարելիս իմացել է իր կարգավիճակի մասին⁶:

Բացի այդ, ոլորտում զբաղվող հասարակական կազմակերպությունները, ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ոլորտի պետական, հասարակական, միջազգային կառույցների, համայնքի ներկայացուցիչների հետ համատեղ գործունեությամբ և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, LQFS և ԹՆՕ հանրույթի ներկայացուցիչների մասնակցությամբ, 2018 թվականի հոկտեմբերի 02-ին իրականացնելու են ՄԻԱՎ-ի հակազդման ազգային կոնսորցիումի՝ «ՄԻԱՎորենք ջանքերը. ՄԻԱՎ-ով ապրող անձանց և առավել վտանգի ենթարկվող բնակչության խնդիրները Հայաստանում» կոնֆերանս, որի շրջանակներում բարձրացվելու են ՄԻԱՎ-ով ապրող անձանց և ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել վտանգի ենթարկվող բնակչության վերաբերող բազմաթիվ հիմնահարցեր և աշխատանքներ են իրականացվելու դրանց համատեղ լուծումների որոնման համար:

Չնայած քրեական օրենսդրությունը նախատեսվում են կատարել օրենսդրական բարեփոխումներ, սակայն ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտերում առկա են բազմաթիվ խնդիրներ: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությունում դեռևս բացակայում է «բժշկական գաղտնիք» եզրույթը, դրա իրավակարգավորման, բժշկական գաղտնիք պարունակող տեղեկությունների հայտնման, պատժի և պատասխանատվության առանձնահատկությունները, որին առավել հաճախ «զգայուն» են ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունեցող անձինք: Վերջինս մեկնաբանվում է այնքանով, որքանով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, բուժաշխատողների պարտականություններում է սահմանված, մասնավորապես՝ պահանջելու բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, փխտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից /5-րդ, 19-րդ հոդվածներ/⁷, ինչպես նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով է սահմանված, մասնավորապես այն, որ առանց անձի համաձայնության արգելվում է հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, այդ թվում՝ առողջական վիճակի մասին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկություններ մշակելը, բացառությամբ, երբ տվյալի մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով /12-րդ հոդված/: Վերջինս կարող է փոխանցել երրորդ անձանց կամ տվյալներից օգտվելու հնարավորություն տրամադրել, եթե՝

⁵ Տե՛ս. ՄԱԶԾ, ՄԻԱՎ-ի փոխանցման քրեականացում.

http://data.unaids.org/pub/basedocument/2008/20080731_jc1513_policy_criminalization_en.pdf

⁶ Տե՛ս. Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության Գլխավոր տնօրինության կարծիքը ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ. <https://rm.coe.int/coe-opinion-on-draft-criminal-code-of-armenia-arm/168075f919>

⁷ Տե՛ս. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=104958>

1) տվյալներ մշակողը հանդիսանում է օրենքով կամ վավերացված միջազգային պայմանագրով սահմանված հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակող, այդ տեղեկության փոխանցումը ուղղակիորեն նախատեսված է օրենքով և ունի բավարար պաշտպանության մակարդակ.

2) օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում հատուկ կատեգորիայի անձնական տվյալները կարող են փոխանցվել տվյալների սուբյեկտի կյանքի, առողջության կամ ազատության պաշտպանության համար /26-րդ հոդված/⁸:

Մյուս կարևոր խնդիրը կայանում է «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված անձանց պատրավորությունների օրինականության, իրավաչափության սահմանների հարցը: Այսպես, օրենքով, մասնավորապես 16-րդ հոդվածով սահմանվում է, որ «ՄԻԱՎ-ով վարակված անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը պարտավոր է իրականացնել ՄԻԱՎ-ի տարածումը բացառող լիազորված պետական մարմնի կողմից հաստատված նախազգուշական միջոցառումները»⁹: Եվ դրանով պայմանավորված, ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի սեպտեմբեր 18-ի թիվ 2187-Ա հրամանով սահմանվել է «ՄԻԱՎ-ի տարածումը բացառող նախազգուշական միջոցառումների ՑԱՆԿ», որի 6-րդ կետով պահանջվում է՝ «Բժշկական օգնություն ստանալու համար բժշկական կազմակերպություններ դիմելիս բուժաշխատողներին տեղեկացնել ՄԻԱՎ-ի նկատմամբ իր կարգավիճակի մասին»¹⁰: Խնդրահարույց է անձի համար չափազանց զգայուն այդպիսի բժշկական գաղտնիքի հայտնման իրավաչափության, հիմնավորվածության ահմանները:

Վերջիններիս առումներով քաղհասարակության ներկայացուցիչները բազմիցս բարձրաձայնել են առկա խնդիրների, իրավական բացերի ու դրանից բխող հետևանքների մասին, սակայն դրանց վերաբերյալ համապատասխան մարմինների կողմից մինչ օրս քայլեր չեն ձեռնարկվել՝ կարգավորելու համար:

3. ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ի պատասխան Կազմակերպության տեղեկատվություն ստանալու հարցման՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության՝ Հայաստանում 2004 թվականից ի վեր գրանցվել է 5 հանցագործություններ, որոնցից դատապարտվել է 2 անձ, այդ թվում՝ 1 իգական սեռի անձ:

Ուշագրավ է, որ «ԴԱՏԱԼԵՔՍ» դատական տեղեկատվական համակարգում առկա է եղել հանրային 1 դատական գործ՝ կապված ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների կատարման համար /որը ներկայացվում է առանց խմբագրման, քանի որ վերջինիս անձնական ներքոնշյալ տվյալներն արդեն հրապարակայնացված են եղել/.

⁸ Տե՛ս. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120901>

⁹ Տե՛ս. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120793>

¹⁰ Տե՛ս. http://www.arm aids.am/images/mainmenu/forpatient/Patientneri_partakanutyunner.pdf

- Ամբաստանյալ՝ Սյուզաննա Նիկոլի Կիրակոսյան. **Սեռը՝** իգական. **Տարիքը՝** 35. **Պետությունը՝** Հայաստանի Հանրապետություն. **Քաղաքը՝** Վանաձոր:

Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակությունը.
Սուզաննա Նիկոլի Կիրակոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2015 թվականի նոյեմբերի 16-ից, հաշվառված լինելով ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում՝ որպես մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչի վարակակիր և հաստատապես տեղեկացված լինելով այդ մասին, 2016 թվականի վերջերից մինչև 2017 թվականի կեսերն ընկած ժամանակահատվածում, պարբերաբար, վարձատրության դիմաց սեռական հարաբերություններ է ունեցել տարբեր անձանց հետ:

ՀՀ ոստիկանության կողմից 11.09.2017 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: 07.12.2017 թվականին նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

14.12.2017 թվականին նա ներգրավվել է որպես մեղադրյալ և նրա նկատմամբ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով և 123-րդ հոդվածի 2-րդ մասով:

27.02.2018 թվականին Սյուզաննա Կիրակոսյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով և 123-րդ հոդվածի 2-րդ մասով նոր մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա 2015 թվականի նոյեմբերի 16-ից, հաշվառված լինելով ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում, որպես ՄԻԱՎ-ի հարուցիչի վարակակիր և հաստատապես տեղեկացված լինելով այդ մասին, սոցիալական խնդիրների լուծման նպատակով որոշել է զբաղվել մարմնավաճառությամբ՝ հստակ նախատեսելով հետևանքների առաջացումը և գիտակցելով իր հետ սեռական հարաբերություն ունեցող անձանց, ինչպես ՄԻԱՎ-ի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելը, այնպես էլ դրանով վարակելու հանգամանքը:

Թաքցնելով վարակակիր լինելու հիշյալ հանգամանքը, նա Վանաձոր քաղաքում՝ տարբեր վայրերում, 2016 թվականի վերջերից 2017 թվականի կեսերն ընկած ժամանակահատվածում՝ պարբերաբար, առանց պահպանակի օգտագործման, բնական ճանապարհով, վարձատրության դիմաց, սեռական հարաբերություններ է ունեցել Հովհաննես Սարգսյանի հետ՝ իր գործողություններով վերջինիս դիտավորությամբ ենթարկելով ՄԻԱՎ-ի հարուցիչով վարակելու վտանգի:

Բացի այդ, Սուզաննա Կիրակոսյանը, նախատեսելով վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը ՄԻԱՎ-ի հարուցիչով վարակումը սեռական ճանապարհով, առանց բավարար հիմքերի ինքնավստահորեն հույս ունենալով, որ բուժում ստանալու կապակցությամբ կկանխվի հիշյալ վարակի փոխանցումը, Վանաձոր քաղաքում գտնվող մի շարք հյուրանոցային համալիրներում ու շոգեբաղնիքներում, նույն ժամանակահատվածում, պարբերաբար, առանց պահպանակի օգտագործման, բնական ճանապարհով, վարձատրության դիմաց, սեռական հարաբերություններ է ունեցել Վահագն Հովսեփյանի հետ՝ վերջինիս վարակելով ՄԻԱՎ-ի հարուցիչով»:

Մինչ դատաքննությունն սկսելը նա միջնորդել է դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարել, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է իր պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատաքննությունն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է, համաձայն է մեղադրանքի հետ, որը դատարանը բավարարել է:

Նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են համարվել այն, որ նա խնամքին ունի մինչև 14 տարեկան մեկ երեխա, վատառողջ է՝ տառապում է ՄԻԱՎ-ով, տուժողները նրանից բողոք և այլ պահանջներ չեն ներկայացրել:

Դատարանը Սյուզաննա Կիրակոսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով և 123-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ:

ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 3 /երեք/ ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկում 1 /մեկ/ տարի 3 /երեք/ ամիս ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հանցանքների համակցությամբ՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 1 /մեկ/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով:

Բայց Սյուզաննա Կիրակոսյանի նկատմամբ կիրառվելով ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը, պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվելով փորձաշրջան 1 /մեկ/ տարի ժամկետով, նրա վարքագծի վերահսկողությունը դրվել է այլընտրանքային պատիժների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնող իրավասու մարմնի վրա՝ ըստ բնակության վայրի, միաժամանակ նրան, որպես ՄԻԱՎ-ի հարուցիչի վարակակիր, պարտավորեցվել է շարունակել բուժումը ՀՀ ԱՆ ՁԻԱՅ կանխարգելման հանրապետական կենտրոնում:

Սյուզաննա Կիրակոսյանի նկատմամբ խափանման միջոց ընտրված չիեռանալու մասին ստորագրությունը թողվել է անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը¹¹:

¹¹ Տե՛ս. http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=30962247438248444